

“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1903

ԹԻՒ 3

ՀԱՆՊԱՐՏ ՏԵՂ ՄԸ
ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Լոնտոնի աղէկ բաներէն մէկը, որ շատ օգնած է աշխարհի այս ամէնէն մեծ քաղաքին ամէնէն առողջ քաղաքներէն մէկը ըլլալուն, այն է որ մեծ գետիններ յատկացուած են հանրային պարտէզներ ըլլալու: Անոնց մէջ տղաք կը հաւաքուին խաղալու համար, անոնց մէջ դայեակները կը տանին մանկիկները որոնց խնամքը իրենց յանձնուած է, և անոնց մէջ աղքատները նոյնքան ազատ են երթալու որքան հարուստները, և նստելու ծառերուն շուքին ներքեւ, և կամ պտըտելու ճամբաներուն վերայ, որոնք կանանչ խոտերուն մէջերը կը դառնան: Այս պարտէզներուն ամէնէն մեծերէն մէկը, թերևս ամէնէն մեծն է խնամապետի Պարտէզը, որուն մէկ մասը կը տեսնուի այս պատկերին մէջ:



չև որ վերջապէս, երբ ձմեռուան ցերեկ մը ցած բալխրով կ'երթար, շունը բարույրական միջոցով կրթելու առիթ մը ներկայացաւ իրեն: Բալխիրը կեցուց երբ տան առջև հասաւ: Շունը դուրս վազեց կատաղաբար, հաջելով և բալխիրին մէջ ցատկելու սպառնալով: Քարոզիչը նստաւ բալխիրին մէջ և կարևորութիւն չտուաւ: Շունը ետ քաշուեցաւ, նորէն յարձակեցաւ, դարձեալ ետ քաշուեցաւ և երրորդ անգամ վազեց յարձակելու, բայց մարդուն չդպաւ: Այնուհետև ետ դարձաւ տան շեմին քով, և պառկեցաւ: Այդ ժամանակէն ետքը քարոզիչը շատ անգամ անցաւ այն տանը առջևէն, բայց շունը ոչադրութիւն չտուաւ անոր, և չէր ցուցներ երբեք թէ կը տեսնէ զանիկա: Բժշկուեցաւ:”

Ասկէ կը սորվինք աղէկ զաւարակութեան մէջ կը գտնուին մարդիկ ճիշդ այդ կենդանիին նման: Կը սիրեն գէշ խօսիլ: Եւ եթէ մէկը կարևորութիւն տայ անոնց, և կա՛մ կուռի կա՛մ փախչի, կը շարունակեն գէշ խօսիլ: Անոնք իրենց յարձակումները կը դադարեցնեն այն ատեն միայն երբ անոնց ընկերները սորվին անոնց հետ վարուիլ վեհ լուծութիւնով:”

պատկերները տեսնելէ շատ տարբեր է: Կ'ուզենք որ բոլոր մեր փոքրիկ ընթերցողները պատեհութիւն ունենան խնամապետի Պարտէզն երթալու:

ՀԱՋՈՂ ՇՈՒՆ ՄԸ

Ամերիկեան լրագիր մը կը պատմէ քարոզիչի մը վրայ որ շատ անգամ պէտք կ'ունենար ճամբայէ մը անցնելու և միշտ նեղութիւն կը կրէր շունէ մը: Սպաէս կը գրէ յիշեալ լրագիրը. «Այդ ճամբուն վրայ գտնուող տան մը մէջ շուն մը կար, որ միշտ դուրս կ'ելլէր և քարոզիչին անկէ անցած ժամանակ անոր վրայ կը յարձակէր կատաղաբար: Քարոզիչը բան մը չըրաւ բաւական ժամանակ, մինչ

զաւ մը: Ամէն հասարակութեան մէջ կը գտնուին մարդիկ ճիշդ այդ կենդանիին նման: Կը սիրեն գէշ խօսիլ: Եւ եթէ մէկը կարևորութիւն տայ անոնց, և կա՛մ կուռի կա՛մ փախչի, կը շարունակեն գէշ խօսիլ: Անոնք իրենց յարձակումները կը դադարեցնեն այն ատեն միայն երբ անոնց ընկերները սորվին անոնց հետ վարուիլ վեհ լուծութիւնով:”

“ՉԵՄ ԿՐՆԱՐ”

«Եկուր, Դանիկ, հոս քեզի հետաքրքրական բան մը կայ:” ըսաւ անոր վարպետը, երկրագործ Պետո, և տղին տուաւ նամակ մը: «Նամակատան պաշտօնեան անշուշտ մոռցած է անոր վրայ

կնիքը կոխել», ըսաւ Դանիկ, նայելով կնիք չկող նամակագրողին վրայ: «Ուտով քու մօրդ նամակ մը կրնաս զրկել, Դանիկ», պատասխանեց երկրագործը: «Կը համարձակիմ ըսել թէ կըրնամ», ըսաւ պատանին մինչ կը թրջէր զանիկա թէյի սանէն արձակուող շոգիին բռնելով: «Կամ կրնաս այդքան փարայով խաղալիկ առնել», ըսաւ Պրն. Պետո անխորհրդաբար: «Ատիկա խաբէութիւն կ'ըլլայ», փսփսաց Դանիկ իրիզը անոր ներսիդիէն: «Նամակագրողը արդէն իր պարտքը կատարած է նամակ մը տանելով: Ուրիշ նամակ մըն ալ կը տանի, վասն զի վրան կնիք չկայ», ըսաւ Դանիկ: «Բայց գիտես որ ատիկա սխալի մը հետեւանքն է», ըսաւ ներսի ազգարարը: «Սխալը նամակատան պաշտօնեայինն է և ոչ թէ իմ», պատասխանեց Դանիկ իր ներսիդիէն, «ատիկա շատ պողտիկ բան մըն է, և կտուա վարութիւնը պիտի չփնտռէ, պիտի չգիտնայ անգամ»: «Դուն պիտի չգիտնամ», և յանձն կրնամ առնել անհաւատարիմ ըլլալ այսպիսի պղտիկ գումարի մը համար», փսփսաց պղտիկ ձայնը: Դանիկ դողաց, վասն զի իրեն այնպէս կու գար թէ մէկը այդ բառերը չիտակ իր ականջին կը խօսէր: Նամակագրողը առածին պէս կրակը նետեց և գոչեց, «Ոչ, ես չեմ կրնար ինքզինքս այսչափ աժան ծախել»: «Ի՞նչ ըրիր», հարցուց երկրագործը, «Նամակագրողը կորսնցուցի՞ր այնչափ յոգնելէդ ետքը»: «Ատկէ աւելի գէշ բան մը ըրի», պատասխանեց Դանիկ չփոթելով: «Ի՞նչ մատերդ այրեցի՞ր չոգիովը», հարցուց անոր վարպետը: «Ոչ», ըսաւ Դանիկ որոշ կերպով: «Ես իմ պատիւս ծախեցի, կամ քիչ մնաց որ պիտի ծախէի»: «Ի՞նչ ըսել կ'ուզես, տղայ: Նամակագրողը շատ աղէկ է: Եւ բանը երբեք պիտի չփնայուի»: «Բայց իմ միտքս է անիկա մէն ժամանակ, և քսան փարան շատ պղտիկ բան մըն է ձեր անձին արժանապատուութիւնը ձեռք բերելու համար: Նաև . . .»: «Նաև ի՞նչ», հարցուց մարդը: «Աստուած գիտէ զանիկա և սրտին կը նայի», պատասխանեց Դանիկ: «Ատ շատ պղտիկ բան մըն է, չարժեք հոգ ընել անտարակոյս», պատասխանեց Պետո,

«վստահ եղէք թէ նամակատունը պիտի չաղքատանայ ատոր համար»: «Աղքատացողը ես պիտի ըլլայի եթէ պատիւս ծախէի քսան փարայի համար, և ամէնէն փաստակար առևտուրը ըրած պիտի ըլլայի»: Եւ այսպէս Դանիկ շահեցաւ յաղթութիւնը, և երբեք չցաւեցաւ իր խղճին ձայնին հնազանդելուն համար:

ՈՒՆԵՆԿԹՂՆԻ ԴՈՒՔՈՂ

Մեծ Բրիտանիոյ բոլոր զօրավարներուն մէջ ամէնէն համբաւաւորն էր Ուէլինկիթընի Դուքը որ մեռաւ 1852ին, ասկէ 50 տարիէն քիչ աւելի առաջ:



83 տարեկան: Անիկա իր զինուորական առաջին ծառայութիւնը ըրաւ Հնդկաստանի մէջ, ուր կեցաւ 1796է մինչև 1805: Բայց իր մեծ համբաւը շահեցաւ Նափոլէոնեան պատերազմներուն մէջ: Սպանիոյ մէջ Բրիտանական զօրագունդերուն հրամանատար եղաւ 1808է մինչև 1814, յաղթեց Նափոլէոնի ամէնէն համբաւաւոր մարշալստաններուն, և Գաղղիա մտաւ իր յաղթական բանակով երբ դեռ Նափոլէոն անձնատուր եղած չէր: Այնուհետև Ուէլինկիթըն մնաց բարով ըսաւ իր զինուորներուն և Անգղիա վերադարձաւ: Բայց երբ Նափոլէոն էլպա կղզիէն փախաւ, ուր աքսորուած էր, և նորէն Գաղղիոյ բանակին գլուխն անցաւ, Ուէլինկիթըն կանչուեցաւ հրամանատար ըլլալու համար

դաշնակից բանակներուն և Վաթերլոյի ճակատամարտին մէջ, որ պատմագրութեան մէջ ամէնէն կարևոր ճակատամարտներէն մէկն է, և վերջապէս յաղթահարեց Գաղղիացի այն փայլուն հրամանատարը:

Սուրբ վերջերը, Ուէլինկիթըն, որ ծանօթ էր «Երկաթեայ Դուք» առնուով, Անգղիոյ նախարարապետ եղաւ, և աւելի վերջերը դահլիճի անդամ ընտրուեցաւ ուրիշ նախարարապետի մը օրով: 1846է մինչև իր մահը առանձնացած և գործէ քաջուած ապրեցաւ: Թաղուեցաւ Սր. Պորոս մայր եկեղեցւոյ կամարներուն ներքև, և նոյն եկեղեցւոյ ուրիշ մէկ մասին մէջ գերեցիկ մահարձան մը կանգնուած է անոր յիշատակին:

Երանի՜ թէ աշխարհի մեծ պետութիւններուն մէջտեղ մնայուն խաղաղութիւն հաստատուէր և Ուէլինկիթընի համբաւը չգերազանցէր վերջէն եկող Բրիտանական ուեղ զօրավար:

ՅՈՅՍ ԲՓԱՄԻՏ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

Բթամիտ տղոց մայրերուն մխիթարութեան համար քանի մը օրինակներ յիշեմ այն պիսի պատանիներու, որոնք փայլուն մարդիկ եղան երբ անոնց փայլունութեան բանալին գտնուեցաւ:

Սյզաք Նիւթըն, երբ իր կարգին ամէնէն վարը կը գտնուէր, անգամ մը կարգին մէջ իրմէ վեր գտնուող սղէն կից մը ընդունեց: Սյզաքը սղին հետ կուռեցաւ և յաղթեց, և իր տարած յաղթութենէն քաջալերուած խորհեցաւ թէ եթէ յաղթեց անոր իր բուռնցներով (եռամբութիւն), կրնայ յաղթել նաև իր ուղեղով: Եւ յաղթեց:

Սյզաք Պարօ, նշանաւոր քարոզիչը, կուռաւէր և ծոյլ տղայ մըն էր: Հայրը ըսած էր անոր համար, «Եթէ Աստուած ուզէ առնել զաւակներէս մէկը, կը յուսամ թէ Սյզաքը կ'առնէ»:

Էտրմ Բլաքը երևելի եկեղեցականին համար հայրը ըսած էր թէ «անտանելի բթամիտ մըն է»: Բայց անոր նկատմամբ պատմուեցաւ թէ խոշոր քարեր կը գլորէ: Ուշագրութիւն ըրէք այն տղոց որոնք խոշոր քարեր կը գլորեն: Անոնք կրնան մեծ գաղափարներ ալ գլորել:

Տր. Չամբրս, համբաւաւոր երէցը, իր տղայութեան ատեն Սէյնթ Էնտրիգի թեմէն արտաքսուեցաւ իբրև «անուղղայ բթամիտ մը»:

Ուրիշըր Սքոթ Սկոլտացի հուշակաւոր փիլասոֆին համար Էտիմուրկի Համալսարանին մէջ Փրոֆէսոր Տէյգէլ ըսաւ, «Բթամիտ է ան և բթամիտ պիտի մնայ»:

Ճան Հաուըրտ, հանրածանօթ մարդասէրը, նշանաւոր էր իր բթամտութեամբ. եօթը տարուան մէջ բան մը չտորվեցաւ:

Եւ երբ բսենք թէ Նափուլէն և Ուէլինկթըն բթամիտ տղաք էին դպրոցին մէջ, փառաւորապէս փակած կ'ըլլանք բթամիտ տղոց վրայ գրուած այս համառօտ յօդուածը:



ԻՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՐ ՃԱՓՈՂՅԻ ԱՂՋԻԿԸ

Թերևս իրենց սրտի խորութիւններուն մէջ ֆրիստոնեայ ժողովուրդներու տղաք և աղջիկներ միևնոյն կերպ կը մտածեն ինչ կերպ որ կը մտածէր ճափոցի աղջիկ մը որուն վրայ լսած ենք հետեւեալ պատմութիւնը:

Անիկա ֆրիստոնեայ չէր, բայց երկու անգամ կիրակնօրեայ դպրոց գնաց բարեկամի մը հետ: Երբ ետ դարձաւ, իր մեծմօր ըսաւ, «Կիրակնօրեայ դպրոցին Աստուածը իմ աստուծոյ տարբեր է: Ես տաճարն երթալու եմ աստուծոյս աղօթելու համար. բայց կիրակնօրեայ դպրոցին մէջի Աստուծոյն կրնաս աղօթել երբ գտնուիս տաքուկ անկողնիդ մէջ ալ, և կամ ուէ առտեն, և ան կրնայ ըլլալ: Բայց բան մը կայ զոր չեմ սիրեր: Կրնայ տեսնել քեզ ամէն ժամանակ, ամէն տեղ, և կը խորհիմ երբեմն թէ ատիկա աղէկ չէ»:

Երբ մեր խորհուրդներն ու գործերը ամէնն ալ շիտակ և օրինաւոր են, կ'ուզենք որ գիտցուին կամ տեսնուին: Միայն այն ատեն, երբ փորձուինք ծուռ գործեր գործել, Աստուծոյ մեր վրայ ըրած հսկողութիւնը չենք սիրեր. և մեր այս զգացումը պէտք է որ զգուշութեան պատճառը ըլլայ մեզի:



ԱՆՔԵՐ ԵՐԿԻՐՆԵՐԸ ՊՏՂԱՐՔԻ ԸՆՆԵՆ
Անցեալ տարուան մէջ կատարուած բոլոր գործերէն և գիւտերէն — ու

րոնց մէջ նշանաւորներ կան, զոր օրինակ անթել հեռագրութիւնը, որով լուրեր կը զրկուին Ովկիանոսէն անդին — թերևս ոչ մէկը աւելի կարևոր է, քան աւարտումը Եգիպտական մեծ թումբին, որուն միջոցով ամբաւ ընդարձակութեամբ անապատ գետիններ պարտէզներու և բարերբեր դաշտերու փոխուած են: Անոր նման փոփոխութիւն մըն ալ եղաւ աւելի կանուխ Միացեալ Նահանգներուն մէջ, որուն միջոցաւ պատուական մշակեալ երկրի փոխուեցաւ



«Մեծ Ամերիկեան Անապատը», ինչպէս կը կոչուէր առաջ: Հոս դրուած երկու պատկերներէն մէկը կը ցուցնէ տեղին ամառի երևոյթը երբ ուռօգող




չրանցքը լմացաւ, և միւսը՝ միևնոյն գետնին երևոյթը տասը տարի յետոյ: Երբ որ շուր ձեռք բերուի, բան մը կը բուսնի, և եթէ Սահարա Անապատին մէջ գետինը խորունկ ծակուի, կրնայ ըլլալ որ Սըրդէսեան ջրհոր մը բացուի, և աշխարհին ամէնէն համբաւաւոր այդ անապատին մէկ մասը ըլլայ բարերբեր երկիր մը:



ԱՐՁՈՒ ՃԵՄԱՐԻՏ ՊՏՏՈՒԹԻՒՆ ՄԸ
Ելլոյթըն Պարտէզ կոչուած Ամերիկայի մեծ Ազգային զբօսավայրին օրէնքները և հոն փակուած վայրի կեն-

դաններուն տրուած կրթութիւնը նշանաւոր են: Ես հոն գտնուած արջու մը պատմութիւնը լսեցի, կ'ըսէ թողթակից մը, զոր յոյժ կարևոր կը նկատեմ, ոչ միայն իբրև ապացոյց անոր մէջ տրուած կրթութեան, այլ իբրև բարոյական դաս մը ծնողքներու՝ տնական հնազանդութեան մասին: Պատմութիւնը բառ առ բառ ճշմարիտ է: Տաք շուրի աղբիւրին քով որ Հին Հաւատարիմ կը կոչուի, ճաշարան մը կայ որուն տէրն է շատ մտալի և տաղանդաւոր մարդ մը: Անցեալ

տարի այդ մարդը ընտանեցաւ էգ արջու մը հետ, որ սովորած էր անոր տունը գալ ամէն օր, և խոհանոցին մէջ կը պտտէր իրեն և իր երկու ձագերուն կերակուրի համար: Չագերը երբեք չէին գար: Պահպանը շատ բարեկամացաւ արջուն հետ, որ միշտ քաղաքավար էր և բարեբարոյ, և կերակուր կ'առնէր անոր ձեռքէն (բայց առանց ձեռքն առնելու): Օր մը արևուն մարը մտնելու ատենները արջը խոհանոց եկաւ, և իր բաժինն առնելէ ետքը, ետևի դռնէն գնաց զանիկա իր ձագերուն տանելու համար: Շատ զարմացաւ ու բարկացաւ տեսնելով որ ձագերը հոն իրեն կը սպասէին: Կերակուրը վար դրաւ և վազեց ձագերուն վրայ և զանոնք լաւ մը ապտակեց, և յետոյ անտառը տարաւ ետ, ամէն քայլի ապտակելով և ծածելով զանոնք: Երբ հասաւ այն տեղը ուր ըսած էր անոնց որ սպասէին, հոն թողուց զանոնք և ինք տունը դարձաւ: Եւ խոհանոցին մէջ կեցաւ ամբողջ երկու ժամ, անհնազանդ ձագերն սպասցնելով իրենց կերակուրին, պարզապէս զանոնք կրթելու և անոնց հնազանդութիւն սորվեցնելու համար: Բացատրութիւնը շատ բնական է: Երբ արջը իր ձագերը տեղ մը կը թողու և ինք կ'երթայ անոնց համար կերակուր փնտտելու, եթէ անոնք մտորին իր բացակայ գրտնուած ժամանակը, ինք մեծ դժուարութիւն պիտի քաշէ զանոնք գտնելու: Մայր արջը գիտէր թէ իր ձագերուն ապահովութիւնը և իր մտալին խաղաղութիւնը ընտանիքին խիստ կրթութեանէն կախում ունի:



ԽՊՃԻ ԳՐԱՄԱԳԼՈՒԽԸ

Միացեալ Նահանգներու եկամուտի աղբիւրներուն մէջ ունէ ուրիշ աղբիւրէ աւելի տարօրինակն է այն որ կ'աւելցնէ «խղճի դրամագլուխը»։ Զարմանալի կարողութիւնն է այն որ յանկարծ մեր առջև կը պարզէ սուկալի և գարշելի երևոյթով մեզ քերք որոնք թերևս գործուած են այն օրերուն մէջ երբ զանոնք գործողներուն բարոյական զգացումը աւելի տկար էր կամ տգիտութիւնը կամ կիրքը կուրացուցած էին խղճը։ Անգամ մը որ անոր ամբաստանիչ ձայնը բարձրանայ, ա՛լ չլռեր։ Եթէ խղճը կամքին միջոցաւ յանդիմանութիւն և զսպուի, նորէն անհանգիստ կ'ընէ մեզ իր իշխանական և անասնների ազազակով։ Խղճի դրամագլուխը 1904 Հոկտեմբերի սկիզբը հասած էր երեք հարիւր տասնըինը հազար իննսունը վեց տոլար և երեսուներկու սէնթի։ Ուրիշ խօսքով, խղճին ազդարար և յորդորական ձայնը դրուած է Միացեալ Նահանգներու քաղաքացիները կառավարութեան վերադարձնել իբր մէկ երրորդ միլիոն տոլար։ Օրինակի համար, Շէքսպիրի մը քանի մը տարի առաջ մէկ տոլար յանձնեց խղճի դրամագլուխին, ըսելով թէ շատ տարիներ առաջ պզտիկ խնձորենի մը առած էր Ծորթ Շէքսպիրին կառավարական պարտէզէն։ Այս գողութիւնը այն ատեն չնչին բան մը երևցած էր անոր, բայց այդ արգելուած ծառին պտուղը դառն եղած էր։ Փոխարէնը վճարելու շատ գործեր կատարուած են անցեալին մէջ ծուռ գործ մը ըրած ըլլալու նկատմամբ հոգևոր արթնութեան ատեն տեղի ունեցած համոզման պատճառաւ։ Վախճանեալ Մր. Մուտիի ունկնդիրներուն մէջ յառաջ եկած հոգևոր արթնութիւններէն ետքը յաճախ կը պատահէր որ խղճի դրամագլուխին ստակ կը բերէին ապաշխարողներ։ Բիշ բացառութեամբ, կառավարութեան պատկանած դրամէն կուրորչն ստակ անցընելու կամ գողութեան յանցանքներ՝ գողցուած ստակը վճարելու գործողութենէն շատ տարիներ առաջ գործուած էին։ Յանցաւորները խոստովանեցան թէ երկար ժամանակ զղջալէ և ցաւելէ ետքը վերջապէս որոշած էին իրենց խղճը հանդարտեցնել ստակը վճարելով կառավարութեան։

Դեռահասներէ և պզտիկներէ ընդունուած նամակներէն մէկ քանին սրտաշարժ են իրենց պարզութեամբ։

Տասնըհինգ տարեկան աղջիկ մը հետեւեալը գրած է Գիլիլընտ նախագահին.

«Առ Գիլիլընտ նախագահն։ Սիրելի նախագահ։ Ես մտքի սոսկայի վիճակի մը մէջ կը գտնուիմ, և խորհեցայ որ ամէն բան գրեմ և ըսեմ ձեզի։ Իբր երկու տարի առաջ, գործածեցի երկու նամակագրոյ՝ որոնք արդէն անգամ մը գործածուած էին նամակներու վրայ, թերևս երկու նամակագրոյնէ աւելի էին անոնք, բայց սա միայն կրնամ յիշել որ երկու անգամ ըրի այդ բանը։ Ես չմտածեցի և չհասկրցայ ըրածս մինչև մօտ օրերս։ Միտքս շատ անգամ այդ բանին կը դառնայ և անոր վրայ կը մտածեմ գիշերցերեկ։ Հիմա, սիրելի նախագահ, կը ներէջք ինձի, վասն զի ես այն ատեն տասներեք տարուան էի միայն։ Վասն զի սրտանց կը ցաւիմ ըրածիս վրայ։

Ձեր հպատակներէն մէկը։»


Նման իմաստով ուրիշ նամակ մը կը պատմէր թէ ապաշխարող անձը երբ տղայ էր, ընդունեց նամակ մը որուն երեք սէնթի մտքը (երեսուն փարա) նամակագրոյն վրայ մոռցուած էր նամակատան կնիքը կոխել։ Ան հանած էր նամակագրոյնը և գործածած էր, և այսպէս կառավարութենէն երեք սէնթ կողպտած էր։ Այս բանը պատահած էր քսան տարի առաջ, բայց երբեք դադրած չէր մարդուն խիղճը տանջելէ։ Ուստի մարդը տայմ մը (100 փարա) դրաւ նամակին ծոցը այդ երեք սէնթը բաղադրեալ տոկոսով մէկտեղ վճարելու համար, որ կը մտածէր թէ իբր եօթը սէնթ պիտի ըլլար։

Կին մը բերաւ պզտիկ գումար մը, որ, ըսաւ թէ, առած գումարէն շատ մը աւելի է, և թախանձագին ներում խնդրեց. «Սաստիկ ցաւը զիս պատեց և ես հանգիստ չեմ կրնար ըլլալ», գրեց։ Կինը մղուեցաւ ստակը տեղը դարձնել, կարդալով Եզեկ. ԼԳ. 15 համարը. «Անամբարիշտը [եթէ] գրաւը ետ տայ ու յափշտակածը հատուցանէ, և անօրէնութիւն չընելով՝ կենաց կանոններուն համեմատ քալէ, անիկա անշուշտ պիտի ապրի, պիտի չվեռնի։»

Կինը իր անունը չյայտնեց և ներում խնդրեց ատոր համար, ըսելով թէ եթէ նախագահին հետ երեսուրեսի գայ, այն ատեն ամէն բան պիտի պատմէ անոր։

ՓՈՒՐԻՎ ԴԻՒԱՆԱԳԼՏ ՄԸ
Մր. Սփըրընի Որբանոցէն փոքրիկ տղայ մը անգամ մը եկաւ անոր ա-


ռատասիրտ հիմնադրին և ըսաւ, «Մր. Սփըրըն, սեպեմբ թէ կենար որբանոց մը մէջը հարիւր որբերով, և բոլոր որբերը հօրեղայրներ և հօրաքոյրներ ունենային որոնք պիտի խնայէին և խնձորներ բերէին անոնց բաց ի մէկէն որ չունի, մարդ մը պիտի չգտնուէր որ այն որբին տար վեց փէննի։» «Կարծեմ պիտի գտնուէր», ըսաւ Մր. Սփըրըն քաղցրութեամբ, «բայց ինչո՞ւ ըրիք այդ հարցումը։» «Վասն զի ես այդ որբն եմ», ըսաւ տղան։ Հարկ չէ ըսել թէ որբը ընդունեց վեց փէննի։



ՅՈՒՆՈՒԱՐԻ ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ք	Բ	Ն	Ս
Ր	Մ	Խ	Ն
Ի	Մ	Խ	Ն
Ս	Լ	Մ	Խ
Տ	Մ	Խ	Ն
Յ	Ե	Ն	Ի

Լուծեցին, Կ. Կոլտ. — Բուզանդ Ա. Գաբրիէլեան, Նուարդ Ա. Գաբրիէլեան, Յովսէփ Հայկազն։ Ա. Կոլտ. — Ստեփան Ռ. Քերէսթէճեան, Նիկոլայ. — Հրանտ Խիզնաբեան։ Արթուր. — Նևտոն Ճէճիզեան։ Ա. Կոլտ. — Մնաս Հ. Գապագճեան։ Ա. Կոլտ. — Խորայէլ Տէր Յովհաննէսեան, Տօնպետ խաչատուրեան, Նշան Շմաւոնեան, Սամսէլ Յովակիմեան, Թուր. — Ինչուանդ Ս. Աճէրեան, Գրիգորի Կ. Պողէէլեան, Անդրանիկ Նիկողոսեան, Խաչէր. — Խաչատուր Յ. Անտօնեան, Վ. Կ. — Միհրան Մ. Ս. Սարգիսեան։



ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՆ

1. Հայ տառ մը, 2. Գերանուն մը, 3. Սեպտեմբրի միւս անունը (աջէն ձախ, ծայրի գէրը զեղջուած), 4. Մարգարեաւհի մը, 5. Մանասի որդւոց մին, 6. Խորայէլի թագաւորներէն մին, 7. Եզեկիայի կուած մէկ անունը։

Գիրքը վերէ կէտերուն տեղը շարելով առաջին սիւնը վերէն վար կ'ըլլայ Գաւթի որդիներէն մէկուն անունը, և աջակողմեան շեղ սիւնը՝ վերէն վար աղօթատեղիի մէկ ուրիշ անունը։

Պրուսա 804 ՀԱՆՆԵՍ ԿԱՐՊԵՏԵԱՆ

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղւոյ համար։

Ամերիկայի Միտիոնարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ճ. Բ. ԿԻՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՅԱՐԱՐՆԻ Ա. ՅԱՅՈՒ ԳՅԱՅԱՆ
Ֆինանսները Եզուշու, Արեւիկայի խան